

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 62/3

27 դեկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց <Մակարեդ> ՓԲԸ 16.11.2013 թ-ի թիվ ԳԵ-54/13 գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ:

<Մակարեդ> ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.

ս.թ. նոյեմբերի 04 Կենտրոնի հարկային տեսչության կողմից կազմված արձանագրությամբ առաջարկվել է ընկերությանը աշխատել և վարել հաշվապահական հաշվառումը շրջանառության հարկի դաշտում:

Ի պատասխան Կենտրոնի ՀՏ գրության, ս.թ. նոյեմբերի 11 թիվ ԳԵ-45/13 նամակով ներկայացրել ենք հիմնավորումներ այն մասին, թե ինչու ընկերությունն աշխատում է ԱԱՀ դաշտում: Գրությանը կցվել են նաև ընկերության գործունեությունը հիմնավորող փաստաթղթերի պատճենները, այդ թվում նաև՝ օտարերկրյա կազմակերպությունների հետ կնքված գործակալական համաձայնագրերը, ինչից ակնհայտ է, որ, համաձայն <Շրջանառության հարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետի, ընկերությունը չէր կարող աշխատել շրջանառության հարկի դաշտում և պարտավոր էր վարել ընկերության հաշվապահական հաշվառումը ԱԱՀ-ի դաշտում:

Միաժամանակ հարկ է նշել, որ ընկերության գործունեության ողջ ընթացքում ընդունվել են ընկերության հաշվետվությունները, այդ թվում նաև ԱԱՀ մասով, ու երբեք չի տեղեկացվել, որ ընկերությունը աշխատում է սխալ հարկատեսակով:

Ս.թ. նոյեմբերի 14 թիվ 025421 որոշմամբ արգելանք է դրվել ընկերության բոլոր հաշիվների և ամբողջ գույքի վրա, զրոյացվել է ընկերության գործունեության արդյունքում կուտակված 794768900 ՀՀ դրամ ԱԱՀ գումարը և զարմանալիորեն ներկայացվել է նաև 139550602 ՀՀ դրամի տուգանք:

Ներկայումս ընկերությունն ավարտել է բազմաթիվ կառուցումը ք.Երևան, Բուզանդի 13 հասցեում: Բնակարանների մոտ 80%-ը վաճառված են, իսկ մնացածը գտնվում են ձևակերպման փուլում: Գնորդների հետ կնքված են նախնական առուվաճառքի պայմանագրեր, առկա են նաև ստանձնված պարտավորություններ գնորդների, գործընկերների, կապալառուների և որոշ պետական մարմինների հետ՝ կրելով նյութական և բարոյական պատասխանատվություն նրանց նկատմամբ:

Սառեցնելով ընկերության աշխատանքները, ընկերությանը զրկվել է կատարել իր պարտավորությունները պետության՝ և վերը նշված կողմերի նկատմամբ, միաժամանակ լուրջ վնաս հասցնելով ընկերությանը ու նրա գործընկերներին, և ամենագլխավորը՝ վնաս հասցնելով ներդրողների ունեցած վստահությանը պետության նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է հանել հաշիվների և գույքի վրա դրված արգելանքները, տալ հնարավորություն աշխատելու և կատարելու օրինական պարտավորությունները պետության նկատմամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում, մասնավորապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված իրավաբանական անձը՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հայտարարության ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 84-րդ ձև), որի ներկայացման դեպքում է միայն շրջանառության հարկ վճարող համարվելու պայմաններին բավարարող անձը համարվում ԱԱՀ վճարող: Նշված հայտարարությունը չներկայացնելու դեպքում անձը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանված է հարկային մարմնում ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, որի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային մարմնին են ներկայացնում իրենց՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարություն (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 71-րդ ձև): Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար օրենքի պահանջ է, որ հարկ վճարողը արդեն իսկ հանդիսանա ԱԱՀ վճարող:

Ավելին, ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանվել է, որ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն չեն ներկայացնում որպես ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն տված անձինք:

Հաշվի առնելով վերոգրյալը, որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարության ներկայացումը հիմք չէ անձին ԱԱՀ վճարող համարելու համար: Քանի որ հայտարարություն ներկայացրած անձի՝ ԱԱՀ վճարող համարվելու օրենսդրական հիմքերը հայտարարությունը ներկայացնելու պահին հարկային մարմնին հայտնի չեն, հարկային մարմնին ընդունել է ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարությունը, ինչը սակայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն չի նշանակում, որ հաշվառման համար հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող:

«Մակարեդ» ՓԲԸ գանգատում բերված այն պնդման վերաբերյալ, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետի հիմքով ընկերությունը չէր կարող համարվել շրջանառության հարկ վճարող, նշվեց հետևյալը:

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն. «Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել համատեղ գործունեության պայմանագրի, ապրանքների մատակարարման կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող անձինք»:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Մակարեդ» ՓԲԸ կողմից ներկայացված 03.03.2011 թ-ի Ծառայությունների մատուցման թիվ 03/ՖԲԿ-Մ պայմանագիրը, արձանագրեց, որ այն չի կարող հիմք հանդիսանալ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետի դրույթը կիրառելու համար: Մասնավորապես, վերոգրյալ իրավանորմի դրույթը կիրառելու համար անհրաժեշտ է ապրանքների մատակարարման կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի առկայությունը, այն դեպքում, երբ 03.03.2011 թ-ի թիվ 03/ՖԲԿ-Մ պայմանագիրը վերաբերում է ծառայությունների մատուցմանը:

Ինչ վերաբերվում է ընկերության գանգատով բերված պահանջին՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի հարկային տեսչության կողմից 14.11.2013 թ-ի թիվ 025421 հանձնարարագրով կազմակերպության գույքի վրա դրված արգելանքը հանելու վերաբերյալ, ապա ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի դրույթներով, ընկերության գույքի վրա դրված արգելանքը կասեցվել է:

Հանձնաժողովը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013թ. կայացած քննարկման N23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով հանձնարարվել է բոլոր այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտն իր տնտեսական գործունեությունը տեղափոխել է ընդհանուր հարկման դաշտ և ցուցաբերել բարեխիղճ հարկատուի վարքագիծ (ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները)՝ չկիրառել օրենսդրորեն նախատեսված (ընթացակարգերի խախտմամբ ԱԱՀ վճարող համարվելու համար) պատժամիջոցները:

Տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ.

1. հարկ վճարողը օրենքով սահմանված ընթացակարգերի խախտմամբ իրեն համարել է ԱԱՀ վճարող,

2. ԱԱՀ-ի գծով առաջացած պարտավորությունները 2013 թվականի ընթացքում ժամանակին չի կատարել, 19.12.2013թ. դրությամբ ԱԱՀ-ի գծով չկատարված պարտավորությունները կազմել են շուրջ 790,0 մլն. դրամ:

Վերոգրյալ արձանագրությամբ տրված հանձնարարականը չի վերաբերվում քննարկվող դեպքին:

Հանձնաժողովի 13.12.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ընկերության գանգատը մերժվել է:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Հիմք ընդունելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը, ինչպես նաև ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Մակարեղ» ՓԲԸ 16.11.2013 թ-ի թիվ ԳԵ-54/13 գրությամբ բերված գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ